ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.21. Չինաստան: Բնակչությունը, տնտեսությունը

• • •

Չինաստանը աշխարհի ամենախտաբնակ երկրներից է: Բնակչության անհավասարաչափ է տեղաբաշխված, արևելյան ծովափնյա շրջաններում բնակչության խտությունը ավելի քան 400 մարդ քառ. կմ է, իսկ արևմտյան լեռնային շրջաններում՝ մինչև 10 մարդ քառ. կմ: բնակվում: Այստեղ ապրում են 56 մեծաթիվ ազգի ներկայացուցիչներ, որոնցից ամենամեծաթիվը չինացիներն են, ինքնանվանումը՝ **հան**, մեծաթիվ են նաև մոնղոլները, տիբեթցիները, մանջուրները: Ազգային փոքրամասնություններից ամենամեծաթիվը չժուաններն են: Թեպետ ազգային փոքրամասնությունների թվաքանակը մեծ չէ, բայց տեղաբաշխումը ցրված է և նրանց կարելի է հանդիպել Չինաստանի ցանկացած վայրում:

• • •

Բուդդայականությունը Չինաստան է թափանցել I դարում ու տարածվել: Բուդդայականության ուղղություններից է լամայականությունը, որը տարածված է Տիբեթում և Ներքին Մոնղոլիայում (ինքնավար մարզ Չինաստանում): Դաոսականությունը ծագել է Չինաստանում՝ II դարում: Կոնֆուցիականությունը, դաոսականությունը և բուդդայականությունը այնքան են սերտաճել, որ դժվար է տեղայնացնել դրանց տարածվածությունը: Մահմեդականությունը Չինաստան է թափանցել VII դարում և առավել մեծ տարածում է գտել Յուանների օրոք: Դավանում են ույղուրները: Կաթոլիկությունը Չինաստան է մուտք գործել VII դարում, իսկ բողոքականությունը՝ XIX դարում:

• • •

Իշխանությունները վարում էին պլանային տնտեսություն, հորդորում վերածնել գյուղատնտեսությունը և իրականացվում էին մեծամասշտաբ

տնտեսական բարեփոխումներ:

1980-ականներից ծովափնյա շրջաններում ստեղծվեցին 5 տնտեսական գոտիներ, 14 բաց քաղաքներ ու բաց ծովափնյա գոտիներ: Այդ բարեփոխումները նպաստեցին արևելյան շրջանների զարգացմանը, այնուհետև սկսվեց նույն գործընթացը արևմտյան, հյուսիսային, կենտրոնական և այլ շրջաններում: Պետության կողմից իրականացվող քայլերը ուղղված էին ներքին շրջանների տնտեսության համալիր զարգացմանը և տնտեսական զարգացման մակարդակների տարբերության վերացմանը:

• • •

Ներկայումս Չինաստանի տնտեսության համար վերափոխման ժամանակաշրջան է, երբ զարգացման արագ տեմպերից անցում է կատարվում հավասարակշռված զարգացման, էքստենսիվից՝ ինտենսիվի, հումքատարից՝ նորարարականի:

• • •

Չինաստանը արդյունահանող տնտեսություն ունեցող երկրից անցում է կատարել վերամշակող տնտեսություն ունեցողի: Չինաստանի վերամշակող արդյունաբերությունը համացանցի միջոցով վաճառքի և վճարումների ծավալով աշխարհում գրավում է առաջին տեղը: Համացանցով իրականացվող գործարքների գումարային արժեքը 2017 թ-ին Չինաստանում կազմել է 27,2 տրլն. յուան: Երկիրը ներկայումս ձգտում է արդյունաբերականացմանը զուգընթաց անցում կատարել ինֆորմատիզացման (տեղեկատվական ոլորտի զարգացման), էկոլոգիապես անվնաս արտադրությունների և մարդկային ներուժի առավել արդյունավետ օգտագործման:

• • •

Կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում գյուղատնտեսությանը: Տրամադրվում են ***սուբսիդիաներ (պետական օժանդակություն)***, վերացվում են գյուղատնտեսական հարկերը, ամբողջությամբ բաց է գյուղատնտեսական արտադրանքի շուկան: Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է, որի առաջատար ենթաճյուղը՝ հացահատիկային տնտեսությունն է՝ բրինձ, ցորեն, եգիպտացորեն, գարի, հնդկացորեն: Դրանց մշակությունը տարեցտարի ավելանում, իսկ տեսականին դառնում է ավելի բազմազան: Հացահատիկի կեսը բաժին է ընկնում բրնձին, որի ցանքատարածությունները հիմնականում Յանցզի գետի հովտում են:

• • •

Չինաստանում զարգացած են տրանսպորտի բոլոր տեսակները: Այն առաջատար է արագընթաց երկաթգծերի և ավտոճանապարհների քանակով: Կարևոր տեսակը երկաթուղայինն է: Երկաթուղիների երկարությունը ավելի քան 60 հազ. կմ է: Ամենակարևոր մայրուղին **Դեղին ծովի** ափից մինչև **Ուրումչի** (Սիցզյան Ույղուրական երկրամաս) ձգվող երկաթուղին է: Երկիրը առաջատար է նաև լեռնային ճանապարհների ձգվածությամբ, նավահանգիստների բեռնաշրջանառության ծավալով, օդանավակայանների թվով և ուղևորաշրջանառության ծավալով, խողովակաշարերի երկարությամբ:

Մեծ թափով զարգանում է ավտոմոբիլային տրանսպորտը: Կառուցվում են նոր ճանապարհներ, թունելներ, կամուրջներ, որոնք կապում են ոչ միայն տարբեր բնակավայրեր այլև հնարավորություն են տալիս հաղթահարել լեռնային ու ջրային դժվարամատչելի արգելքները, որոնց մասին խոսելիս նշվում է «ամենա» բառը:

• • •

Ջրային գլխավոր զարկերակներն են **Յանցզի**, **Սիցզյան** գետերը և 1900 կմ երկարությամբ **Մեծ ջրանցքը**: 2018 թ-ին ավարտվեց Յանցզիի հունի մինչև 12,5 մ խորացումը Նանկինից մինչև գետաբերան, ինչի շնորհիվ այն անցանելի է մինչև 50 հազ տ տարողությամբ նավերի համար: Միջին ու ստորին հոսանքներում իրականացված կարգավորումներից հետո գետը դարձավ փոխադրումների ծավալով ամենամեծն աշխարհում: Փոխադրումների մեջ մեծ է նաև **Հուանհե** ու **Սիցզյան** գետերի դերը:

• • •

Չինաստանում պետական լեզուն չինարենն է, իսկ գիրը՝ չինական հիերոգլիֆները: Թեպետ ազգային փոքրամասնությունների դպրոցներում ուսուցումն իրականացվում է մայրենի լեզվով, և այդ լեզուներով էլ հրատարակվում են դասագրքերը, բայց ազգային դպրոցի ծրագիրը միաժամանակ ներառում է նաև չինարեն լեզվի դասընթացներ:

Չինաստանի բնակչության կրոնական կազմը խայտաբղետ է: Առավել տարածված կրոններն են չինական ազգային կրոններ կոնֆուցիականությունը և դաոսականությունը, ինչպես նաև բուդդայականության մահայանա ուղղությունը, մահմեդականությունը, քրիստոնեությունը՝ կաթոլիկություն,

բողոքականություն ուղղություններով: Չինաստանի սահմանադրությունը թույլ է տալիս դավանանքի ազատություն: Օրենքները պաշտպանության տակ են վերցնում կրոնական գործունեությունը:

• • •

Այստեղ ստեղծվել է ազատ տնտեսական գոտի՝ երկրում առաջինը և ամենախոշորը: Շանհայի մշակույթը ձևավորվել է Չինաստանի հարավի մշակույթի հիման վրա, այնուհետև կրել է եվրոպական և ամերիկյան մշակույթների ազդեցությունը: Հանդես է գալիս որպես ավանդականի և ժամանակակցի կրողը:

Խոշոր քաղաքներ են նաև Չունցինը (15 մլն. մարդ) («մառախլապատ քաղաք»), Գուանչժոուն (8,5 մլն.) և Տյանցզինը (8 մլն.):

Հոնկոնգի (**Սյանգան**) տարածքը 1104 քառ. կմ է: Նավահանգստային քաղաք է, տարածաշրջանային ու միջազգային ֆինանսական կենտրոն, հայտնի է կարգապահական կանոնների պահպանությամբ, ազատ տնտեսական համակարգով:

• • •

Վերջին տասնամյակներում Չինաստանում ստեղծվեց սոցիալիստական շուկայական տնտեսություն, երկիրը տնտեսության տարբեր ոլորտներում սկսեց վարել «բաց դռների» քաղաքականություն և կատարել ֆինանսական ներդրումներ: Երկիրն ընթանում էր տնտեսավարման նոր ուղիով՝ հենվելով նորարարության և համակարգվածության վրա:

• • •

Ներկայումս Չինաստանի տնտեսության համար վերափոխման ժամանակաշրջան է, երբ զարգացման արագ տեմպերից անցում է կատարվում հավասարակշռված զարգացման, էքստենսիվից՝ ինտենսիվի, հումքատարից՝ նորարարականի:

Մշակվում են այնպիսի ծրագրեր ինչպիսիք են «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտի», «Տնտեսական միջանցք Չինաստան–Պակիստան», որոնք կնպաստեն հետագա տնտեսական համագործակցությանը:

• • •

Վուշե գործվածքների արտադրության խոշոր կենտրոնը **Հարբինն** է:

Մետաքյա գործվածքների արտադրությունը տեղաբաշխված է երկրի Արևելյան և Հարավային նահանգներում:

Չինաստանը զբաղեցնում է աշխարհի ցամաքի 7%-ը, որտեղ ապրում է աշխարհի բնակչության մոտ 18%-ը: Գյուղատնտեսական արտադրանքը չի բավարարում սեփական պահանջարկը, սակայն որոշ արտադրատեսակներ արտահանվում են:

• • •

Երկրի արևմտյան շրջաններում զարգացած է ուղտաբուծությունը: Չինաստանը շերամապահության հայրենիքն է: Ձկնորսությամբ և ձկան պահածոների արտադրությամբ աշխարհում առաջինն է: Բացի այն, որ ձուկ որսվում է ծովերից ու գետերից, լայն տարածում ունի նաև աքվակուլտուրան (աշխարհում առաջինը Չինաստանում), որտեղ զբաղվում են հատկապես ձկնաբուծությամբ:

• • •

Որպեսզի տնտեսության աճի տեմպերը համապատասխանեն բնակչության աճի տեմպերին, XX դ. 80-ական թվականներին պետությունն անցավ ժողովրդագրական քաղաքականության նոր ռեժիմի և սկսեց վարել ծնելիությունը սահմանափակող քաղաքականություն, որի կարգախոսն էր՝ «մեկ ընտանիք, մեկ երեխա»: Սա էլ իր բացասական հետևանքներն ունեցավ: Այն հանգեցրեց աշխատանքային ռեսուրսների նվազման և ազգի ծերացման: Արագ զարգացող արդյունաբերությունը սկսեց զգալ աշխատուժի կարիք: Հետագայում բնական աճը ինքնակարգավորվեց նաև, և երկիրը հրաժարվեց այդ կարգախոսից:

• • •

2017 թ. Չինաստանում կար 229 քաղաքացիական օդանավակայան: Միջազգային նշանակության օդանավակայաններ կան **Բեյջինում** (ուղևորաշրջանառության ծավալը՝ 100 մլն), **Շանհայում**, **Գուանչժոուում** և այլ քաղաքներում:

• • •

Չինաստանը աչքի է ընկնում կոնտեյներային փոխադրումներ իրականացնող ավտոմատացված նավահանգիստներով: Այդպիսիներից է

Շանհայը, որը 2017թ-ի տվյալներով կոնտեյներային բեռնափոխադրումնե-
րի ծավալով աշխարհում առաջինն էր: Խոշոր նավահանգիստներից են նաև
Շենչժենը, **Նինբոն**, **Սյանգանը**, **Ցինդաոն**: